

ի պաշտօնէից մեծութեան քոյ յարեւելեան վաճառականութենէ արտաքս վարիցին, եւ յողոք անկեալ աղաչեն բազում թախանձանօք, զի այն իրաւունք քոյով հրամանաւն շնորհեսցին նոցա միւսանգամ :

Այսր իսկ ազագաւ գայ առ մեծութիւնդ քս մեծարոյ արքեպիսկոպոսն Տերզնոյ Յովհաննէս, յորմէ գամենայն յորդագոյնս եւ յաճախագոյնս իմասցիս : Եւ նա ոչ առանց ինչ արժանեաց ի մերմէ առանձին պաշտպանութենէ թիկունս օգնականութեան գտեալ՝ յուսայ զոր խնդրէն գտանել ի քումմէ բարերարութենէ :

Իսկ մեք, որպէս եւ հովուական խնամք մեր պահանջեն, զքրիստոնեայ Հայս եւ զայնոսիկ, որ առ վէմն հաւատոյ որպէս զկաթովիկեայս ընթացեալ իցեն, ընդունիմք հայրական զթով եւ ցանկամք ամենայն հաւաստօք սիրոյ յօղել զնոսս անդէն ի միութիւն մեծին եկեղեցւոյ. զնոյն խնամս եւ ի քո մեծութենէդ գտանել վասն քոյոյ բարեպաշտութեան եւ հանապազօրեայ եռանդանն, որ առ ի տարածումն կաթողիկէ հաւատոց, ոչինչ կասկածիմք :

Եւ արդ, սիրելի սրդի ի Քրիստոս, ի Քեզ յանձն առնեմք յամենայն սրտէ զհայ Ազգն եւ զհայ վաճառականս եւ ի վեր քան գամենայն պայնոսիկ, որ ի Ջուղայեցւոց քաղաքէ անտի են, զորոց ասեն եթէ մեծաւ հոգարարձութեամբ ի տուրեւատիկ շահսն պարապիցին. եւ դարձեալ եթէ, որպէս լսեմքս, ողորմու-